01/10.1/8423-09

2009-11-25

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Վահան Հովհաննիսյանի, Արծվիկ Մինասյանի, Արտյուշ Շահբազյանի, Ռուզաննա Առաքելյանի և Արա Նռանյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ։

1. Նոր հարկային արտոնությունների սահմանումը հակասում է 2008 թվականի ապրիլի 30-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության ծրագրի դրույթներին, որոնցով ամրագրվել է, որ հարկային քաղաքականության մշակման և իրականացման շրջանակներում Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջնորդվելու է արտոնությունների առավելագույն կրճատմամբ, առանձին ոլորտների, գործունեության առանձին տեսակների, առանձին ձեռնարկությունների համար որևէ բնույթի հարկային արտոնությունների բացառմամբ։

2. Նախագծով նախատեսվում է արտոնություն տրամադրել գիտական կազմակերպություններին։ «Գիտական կազմակերպություն» հասկացության սահմանումը տրված է «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, որի համաձայն գիտական կամ գիտատեխնիկական կազմակերպություն է հա-

մարվում այն կազմակերպությունը, որը, անկախ իր կազմակերպական-իրավական ձևից, հիմնականում իրականացնում է գիտական կամ գիտատեխնիկական գործունեություն, զբաղվում է գիտական կադրերի պատրաստմամբ: Հասկացության սահմանումը հնարավորություն չի տալիս այս կամ այն կազմակերպությանը միանշանակ համարել գիտական կամ ոչ գիտական: «Գիտական կազմակերպություն» հասկացությունը տարողունակ է և կարող է ընդգրկել բազմազան և բազմաթիվ տնտեսավարող սուբյեկտներ: Հետևաբար, օրենքի նախագծով հստակեցված չեն արտոնության կիրառման շրջանակները, ինչն արտոնությունների կիրառման առումով չարաշահումների տեղիք է տալու:

3. Նախագծի ընդունումը նախադեպ կհանդիսանա հետբուհական կրթության մյուս մասնակիցներին ավելացված արժեքի հարկից ազատելու համար:

4. Նախագծին կցված չէ որևէ հաշվարկ կամ գնահատական, թե ինչ շրջանառություններին է վերաբերելու արտոնությունը (նախագծի ընդունումն ինչ ֆիսկալ հետևանքներ կարող է ունենալ):

5. Նախագծում կիրառվել են իրավական ակտերում կիրառված հասկացություններից տարբերվող կամ անորոշ հասկացություններ, ինչն օրենքի կիրառման հարցում հիմնախնդիրներ է առաջացնելու: Այդ հասկացությունները չեն համապատասխանում «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կիրառված հասկացություններին: Մասնավորապես, նախագծում օգտագործված է «հայցող» հասկացությունը, մինչդեռ դրա փոխարեն նշված օրենքում կիրառված է «հայցորդ» հասկացությունը:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված օրենքի նախագծի ընդունմանը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Սուրեն Կարայանը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ
Պ-746-27.10.2009-ԳԿ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին

Հոդված 1. «Ավելացված արժեքի հարկի մասին» 1997 թվականի մայիսի 14-ի ՀՕ-118 Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 15-րդ հոդվածի 2-րդ կետում «հաստատությունները» բառից հետո լրացնել «, ինչպես նաեւ ասպիրանտուրայի, օրդինատուրայի, դոկտորանտուրայի կամ հայցողների համակարգի միջոցով գիտական կադրերի պատրաստում ապահովող գիտական կազմակերպությունները» բառերը։

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։

ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու նպատակն է խրախուսել գիտական կադրեր պատրաստող գիտական կազմակերպություններում սովորելու ցանկություն հայտնող անձանց, ինչպես նաեւ հավասար պայմաններ ստեղծել բարձրագույն ուսումնական հաստատությունների եւ գիտական կազմակերպությունների համար։ Խնդիրն այն, որ ներկայումս գիտական կադրերի պատրաստման հիմնական ձեւերի գործադրման համար ԱԱՀ-ից ազատման արտոնություն է վերապահված միայն բարձրագույն ուսումնական

հաստատություններում սովորողների համար, մինչդեռ նման գործում մասնագիտացված կազմակերպություններում՝ հիմնականում ՀՀ ԳԱԱ համակարգում գործող գիտահետազոտական ինստիտուտներում, օրինակ՝ ասպիրանտական կամ հայցողի համակարգով ուսուցում ստանալու ցանկություն ունեցող անձինք վճարում են ավելի մեծ գումար, ինչն էլ որոշակի անհավասար պայման է ստեղծում այս հաստատությունների միջեւ։ Օրինագիծը համահունչ է նաեւ ներկայումս գիտության դերի բարձրացմանը միտված ՀՀ պետական ծրագրերին եւ հայտարարված քաղաքականությանը։